ՄԱՐԶԱԿԱՆ

# Ավարտվեցին ՀՀ կանանց եւ տղամարդկանց շախմատի առաջնությունները

Երեւանի շախմատիստի կենտրոնական տանը երեկ կայացած ՀՀ կանանց եւ տղամարդկանց շախմատի առաջնությունների հանդիսավոր փակման ժամանակ ՀՀ վարչապետ, ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահ **Սերժ Սարգսյանը** շնորհավորեց մրցաշարի մասնակիցներին եւ հյուրերին հետաքրքիր մրցումների առիթով՝ մրցաշարերը իրադարձություն համարելով Հայաստանի մարզական կյանքում:



ՖՈՏՈԼՈՒՐ

Մրցումների արդյունքով լիովին ձեւավորվեցին Հայաստանի շախմատի հավաքականները, որոնց, ֆեդերացիայի նախագահի խոսքով, այս տարի նոր հեղինակավոր միջազգային մրցումներ են սպասում: Ս. Սարգսյանը մրցանակներ հանձնեց չեմպիոններին՝ Լիլիթ Գալոյանին եւ Կարեն Ասրյանին, մրցանակակիրներին՝ Սիրանուշ Անդրեասյանին եւ Նելլի Աղինյանին, Արտաշես Մինասյանին եւ «մրցաշարի սենսացիա» համարվող Սամվել Տեր-Սահակյանին:

■

Լեւոն Արոնյանը ադրբեջանցի գրոսմայստեր Թեյմուր Ռաջաբովին հաղթելուց հետո սեւ ֆիգուրներով ոչ ոքի է խաղացել ադրբեջանցի մեկ այլ գրոսմայստեր Շահրիյար Մամեդյարովի հետ հոլանդական Վեյք-ան-Զեե քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի «Ա» խմբի 8-րդ փուլում եւ այժմ 5-ական միավորով կիսում է 2-3-րդ տեղերը ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի հետ: Մրցաշարի առաջատարն է նորվեգացի Մագնուս Կառլսենը՝ 5,5 միավոր:

*Արմենպրես*